



ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՎԱՅԻՆ
ՆԱԽԱՆԱԲԱՆ

**Մեր Համալսարանը
հնի և նորի համալիր
գաղափարակիրն է**

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ, ԴՈՒՔ ՃՇՀԱՅ-Ի ԴԻՊԼՈՄԱԿԻՐՆԵՐՆ ԵՔ:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողները, համալսարան ոտք դնելու առաջին իսկ օրվանից գիտեն, որ 95-ամյա կենսագրություն ունեցող համալսարանի պատիվն ու անունը բարձր պահելը սուրբ առաքելություն է: Եվ, յուրաքանչյուր ուսումնական տարեվերջ մեր համալսարանում բերքառատ շրջան է: Ուսանողները քաղում են իրենց տարիների տանջանքի, ուսանող լինելու բերկրանքի արժանի պտուղները:

Ամեն ինչ սկսվում է դիպլոմային աշխատանքների պատրաստմամբ, հետո՝ դրանք պրոֆեսորադասախոսական կազմի դատին հանձնելով, ավարտվում՝ երդումներով, կարմիր ու կապույտ դիպլոմներով և օդում ճախրող գլխարկներով: Շնորհավորում ենք, դուք ՃՇՀԱՅ-ի դիպլոմակիրներն եք:

«Խոստանում եմ հավատարիմ լինել ճարտարապետի կոչմանը, ինամբով վերաբերվել ճարտարապետական, պատմական ու բնական ժառանգությանը...»:

Այս տարի մեր համալսարանը պատվով ավարտեց 117 բակալավր և 42 մագիստրոս ճարտարապետ, որոնցից 44-ը՝ գերազանցության դիպլոմով: Դիպլոմների հանդիսավոր արարողությունն անցկացվեց ՀՀ ճարտարապետների միությունում, որտեղ ներկա ՃՇՀԱՅ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանը, դասախոսները և հյուրերը շրջանավարտներին միաբերան հորդորեցին հավատարիմ մնալ ճարտարապետի կոչմանն այնպես, ինչպես ծնողին:



Հրաժեշտի հանդիպման վայրը կրկին ճարտարապետների միությունն էր: Դիպլոմների արժանանալու հերթը դիզայներներինն էր: Արդեն դիզայների պատվավոր կոչմամբ՝ 136 բակալավրի և 13 մագիստրոսի հանձնվեցին դիպլոմներ՝ 16-ը՝ գերազանցության:



Մեր համալսարանի շինարար շրջանավարտներին այս տարի դիպլոմներ հանձնվեցին առանձնակի շուքով ու կարևորությամբ: Հատուկ էր ընտրված վայրը, որի խորհուրդն առավել էր բարձրացնում դիպլոմակիրների՝ շինարարի բարձր կոչմանն ազնիվ ու անձնվեր ծառայելու պատասխանատվությունը:

Շինարարության ֆակուլտետի 29 մագիստրոսի և 117 բակալավրի դիպլոմներ հանձնվեցին 'Հրանտ Մաթևոսյան'. մշակութային կենտրոն-թանգարանի շինհրապարակում: Արարողությանը ներկա Երևանի գլխավոր ճարտարապետ Տիգրան Բարսեղյանն օրը պատմական որակեց՝ նշելով, որ Հրանտ Մաթևոսյանի պես բարդ ու խորը գրողի անունը կրող մշակութային կառույցի ներքո որպես շինարարներ կնքվելը խիստ հատկանշական է ու պարտավորեցնող:



Բարեմաղթանքները շատ էին. հարթ ու կանաչ ճանապարհը, վերելքները, ձեռքբերումներն ու հաղթանակները թող միշտ Ձեզ ուղեկից լինեն: Դիպլոմները մասնագիտական բարձունքի արդեն առաջին աստիճանն է: Ուսանողների հրճվանքն ու ոգևորությունը և դասախոսների հպարտ հայացքներն ու բարձր ճակատները վկայում էին, որ այսօրվա շրջանավարտները վաղը դառնալու են մեր երկրի արժանավոր մասնագետները:

ՃԱՄԲԱՐԱՅԻՆ ՕՐԵՐԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ

Արդեն երկրորդ տարին է, ինչ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողները համախմբվում են մեկ գաղափարի շուրջ՝ մեկտեղելով հաճելին օգտակարի հետ:

ՃՀՅԱՀ-ի Ուսանողական խորհրդի և Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ՝ հուլիսի 9-15-ը Բյուրականում անց է կացվում «Երիտասարդ ինժեներների ճամբար»:



Ճամբարային օրերի ընթացքում ուսանող մասնակիցներն իրենց ուժերն են չափում մարզական, մշակութային և ինտելեկտուալ մրցույթներում, հանդիպումներ ունենում պետական, քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների հետ:

Մասնակիցների համար անցկացվում են նաև պարի և առաջին բուժօգնության դասընթացներ:

ՃԱՄԲԱՐԱԿԱՆՆԵՐՆ ԱՄՓՈՓԵՑԻՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԵՐԸ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային հաալսարանի Ուսանողական խորհրդի ճամբարային ևս մեկ բովանդակալից շրջան ամփոփվեց: Այս անգամ մեր ուսանողներն Արցախում էին՝ Հայերի հաղթանակի ուղին՝ ծրագրի՝ 10-րդ հորելյանի առթիվ:

Հուլիսի 23-26-ը Ուսանողական խորհրդի պատվիրակությունն անցկացրեց զինվորի կողքին, հպարտացավ Հայրենիքի պաշտպանների ձեռքբերումներով, խիզախությամբ, ծանոթացավ նրանց խնդիրներին և ապացուցեց, որ միշտ զինվորի կողքին է և նրա աջակիցը:



Ճամբարական ուսանողների առաջին կանգառը Դադիվանքն էր, որտեղ նրանք ծանոթացան վանքային համալիրին և մասնակցեցին պատարագին: Երեկոյան արդեն Ստեփանակերտում էին՝ պատրաստվելու զորամասեր այցելությանը:

Հաջորդ օրերն արդեն խիստ պաասխանատու, ճանաչողական և ուսուցողական էին: Մեր ուսանողները քաղաք Ասկերանում ծանոթացան մարտական զենքին, նրա տիրապետման կանոններին և հնարավորություն ունեցան գործնականում օգտագործել զենքը հատուկ թիրախների վրա:

Այնուհետև այցելեցին Մարտուռու 2-րդ պաշտպանական զորամաս, ծանոթացան զինվորական առօրյային, միասին ճաշեցին զորամասի ճաշարանում, որից հետո զորամասին ու նորակոչիկներին հանձնեցին նվերներ և անհրաժեշտ պարագաներ: Չորամաս այցելությունն այսքանով չսահմանափակվեց: Ուսանողական խորհրդի մշակութային հանձնաժողովը հանդես եկավ համերգային ծրագրով: Պարային անսամբլն իր ելույթներով և Տիգրան Զախվեջյանն՝ իր հարենասիրական կատարումներով ոգևորեցին զինվորներին:

Ճամբարային օրերն ամփոփվեցին Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում, որտեղ մեր համալսարանի լարային քառյակը հանդես եկավ համերգային ծրագրով:

Հագեցած, ոգեշնչված ու տպավորված՝ մեր ուսանողները վերադարձան Երևան՝ սպասումով հաջորդ հանդիպման և սահմանից միայն խաղաղության ու հաղթության մասին լուրերի:

ԲԱՉԵ 2017

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ուսանողական խորհրդի ջոկատը յուրաքանչյուր տարի մասնակցում է «Բազե» համահայկական երիտասարդական հավաքին: Օգոստոսի 26-ին Շաղկաձորում տեղի ունեցավ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից կազմակերպվող ամենամյա «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի փակման արարողությունը, հավաքի նպատակն էր համախմբել երիտասարդներին ազգային խորհրդանշանների ներքո, տալ ինքնադրսևորման, ուժերը չափելու հնարավորություն:



ՃՇՅԱՅ Ուսանողական խորհրդի ջոկատը նարնջագույն ճակատից էր և այս տարի «Բազե 2017»-ում հաղթող ճանաչվեց նարնջագույն ճակատը:

Հպարտանում ենք և շնորհավորում ենք մեր հզորագույն թիմին:

ՃՇՅԱՅ ռեկտոր Գագիկ Գալստյանը, Ֆինանսատնտեսական և տեղեկատվական աշխատանքների գծով պրոռեկտոր Մարինե Ղազարյանը, Ուսանողական խորհրդի նախագահ Հովսեփ Հովեյանը, հանդիպեցին հաղթանակած բազեականներին: Ռեկտոր Գագիկ Գալստյանը շնորհավորեց «Բազե 2017»-ում տարած հաղթանակների համար և մաղթեց նորանոր հաջողություններ:

ՇԻՆԱՐԱՐԻ ՕՐԸ՝ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ԵՎ ՊԱՐԳԵՎՆԵՐՈՎ

Օգոստոսի 11-ին մեծ հանդիսություն էր՝ Շինարարի մասնագիտական տոնին ընդառաջ, որն ավանդաբար նշվում է օգոստոսի երկրորդ կիրակին: Տոնական միջոցառմանը մասնակցում էին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, Երևանի քաղապետ Տարոն Մարգարյանը, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանը և բարձրաստիճան այլ հյուրեր: Տոնական հավաքույթին վարչապետ Կարեն Կարապետյանն ընդգծեց տոնի վերահաստատման կարևորությունը՝ նշելով, որ այն ամեն տարի նշելը փաստում է, որ շինարարությունը եղել ու մնում է մեր երկրի տնտեսության կարևոր և առանցքային բնագավառներից մեկը:

Հայ շինարարներին իր շնորհավորական ուղերձը հղեց նաև քաղաքապետը: Տարոն Մարգարյանը հորդորեց միասնական ջանքեր գործադրել՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ոլորտը զարգացնելու, փորձառու կազմակերպություններ ու մասնագետներ ունենալու և երազանքի մայրաքաղաք կառուցելու համար: «Թող մեր քաղաքում երբեք չլռի շինարարական մուրճի ձայնը», - բոլորին մաղթեց Երևանի քաղաքապետը:




Շնորհավորանքներին ու բարեմաղթանքներին հաջորդեց պարգևատրման արարողությունը: Շինարարի օրվա առթիվ՝ քաղաքապետի ոսկե մեդալներին և պատվոգրերին արժանացան ոլորտի մի շարք ներկայացուցիչներ: Արդյունավետ և բարեխիղճ աշխատանքի համար՝ Երևանի քաղաքապետի ոսկե մեդալով պարգևատրվեց նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ինժեներական գեոդեզիայի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու Սուրեն Թովմասյանը:

Տոնական օրվա շրջանակում՝ շինարարներին պարգևներ հանձնեց նաև ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը:

ՀԱՅՏՆԻ Է ԲԱԼՏՐՈՒՆԵԱՅՏԻՍԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐԸ

2017 թվականի օգոստոսի 28-ին հայտնի դարձավ լիտվացի պատմաբան, արվեստաբան Յուրգիս Բալտրուշայտիսի անվան մրցանակակիր ուսանողի անունը: Աշխատանքների ներկայացման, մրցույթի ամփոփման և հաղթողի անունը հրապարակելու արարողությանը ներկա էին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր Գագիկ Գալստյանը, Հայաստանում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասը, Պետրոս Ալոյան-ի անվան հիմնադրամի տնօրեն Հայկ Ալոյանը, Մեդիամաքս՝ լրատվական գործակալության տնօրեն Արա Թադևոսյանը, Ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանը, դասախոսներ և ուսանողներ:

Սարգիս Թովմասյանը ներկայացրեց մրցույթին ներկայացված մասնակիցներ Արմինե Զթոյանին, Մարգարիտ Առուստամյանին, Պոլինա Քեշիշյանին, Շողեր Խաչատրյանին և Դավիթ Նահապետյանին, որից հետո Ժյուրիի անդամները որոշեցին հաղթողին: Զննարկումից հետո միաձայն որոշվեց Բալտրուշայտիսի անվան մրցանակը՝ 1500 եվրոյին համարժեք դրամը, հանձնել Շողեր Խաչատրյանին: Ի հավելումն նշվեց, որ առաջիկա 5 տարիներին նույնպես մրցույթն անցկացվելու է, և մրցանակը լինելու հաղթող ուսանողի մագիստրատուրայի վերջին կուրսի վարձավճարը:



Հիշեցնենք, որ Բալտրուշայտիսի անվան մրցանակ շնորհելու գաղափարը ծնվել էր դեռևս մայիս ամսին, երբ աշխատանքային այցով մեր համալսարան էր ժամանել դեսպան Էրիկաս Պետրիկասը: Այդ պահից մեկնարկեցին մրցույթի անցկացման կարգը, ժամկետներն ու մրցանակները սահմանելու աշխատանքները: Որոշվեց, որ Պետրոս Ալոյան-ի անվան հիմնադրամի, ՀՀ-ում Լիտվայի դեսպանատան ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ համատեղ կազմակերպվող մրցույթի՝ Պատմաճարտարապետական ժառանգության պահպանում և վերականգնում՝ անվանակարգով մրցանակը շնորհվելու է Ճարտարապետության ֆակուլտետի տարվա լավագույն ավարտական աշխատանքի հեղինակին: Հունիս ամսվա ընթացքում՝ Ճարտարապետության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից մրցույթին ներկայացվեցին 5 աշխատանք, որոնցից լավագույնն էլ արժանացավ մրցանակի:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՄՏ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանն սեպտեմբերի 1-ին ընդունեց իր նոր՝ 445 ուսանողներին:

Ժպտադեմ ու պատրաստակամ դասախոսների ժպիտների, շփոթված ուսանողների, ազգային երգ ու պարի համադրությամբ օրը վերածվեց տոնի:



Ճարտարապետության ֆակուլտետի 97, Շինարարության ֆակուլտետի 51, Դիզայնի ֆակուլտետի 139, Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի 107 և Քաղաքային տնտեսության և Էկոլոգիայի ֆակուլտետի 51 ուսանողներին բարի գալուստ մաղթեց ռեկտոր Գագիկ Գալստյանը՝ մաղթելով նրանց բարի ու բարձր առաջադիմությամբ երթ։

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ը՝ ԴՊՐՈՑՈՄ

Սեպտեմբերի 1-ին Հայաստանի կրթական բոլոր հաստատություններում հնչում է դպրոցական առաջին զանգը։ Սեպտեմբերի 1-յան բարեմաղթանքներ, ծաղիկներ, փուչիկներ և մեծ ապագա կանխատեսող լայն ժպիտներ։

Տոնական էր օրը նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցում։ Շուրջ 300 աշակերտ մուտք գործեցին դպրոց՝ հետագայում բանիմաց մասնագետ դառնալու հստակ որոշմամբ։



Գիտելիքի օրվա առթիվ՝ աշակերտներին իրենց ողջույնի խոսքերը հղեցին ՃՀՀԱՀ-ի ռեկտոր Գագիկ Գալստյանը, դպրոցի տնօրեն Աննա Մարուխյանը, ովքեր հորդորեցին կարևորել գիտելիքի ուժը, գնահատել ժամանակը և ապագայում կատարել մասնագիտական ճիշտ ընտրություն։

Աշակերտները տոնական օրը համեմեցին և հյուրերին ողջունեցին Գիտելիքի օրվան ձոնված ասմունքով, երգ ու պարով։

ՃՀՀԱՀ-Ն և ՀՊՏՀ-Ն ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ

Սեպտեմբերի 11-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջև կնքվեց համաձայնագիր՝ հիմնված 2017թ-ի հունիսի 1-ին նույն համալսարանների միջև կնքված պայմանագրի վրա։

Համաձայնագրի ստորագրմանը ներկա էին ՀՀ Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, ՃՀՀԱՀ-ի և ՀՊՏՀ-ի ռեկտորներ Գագիկ Գալստյանն ու Կորյուն Աթոյանը,

պրոռեկտորներ, ներկայացուցիչ՝ Երևանի քաղաքապետարանից, պրոֆեսորներ, դասախոսներ, հյուրեր և ուսանողներ:

Համաձայնագրի ստորագրումը ՃՀԱՀ-ի, ՀԴՏՀ-ի և Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանի «Նախագծերի կառավարում»՝ զբոսաշրջության և անշարժ գույքի ոլորտներում անվանումով համատեղ մագիստրոսական կրթական ծրագրի մեկնարկային միջոցառումն էր, որի համար հիմք է ծառայել 3 համալսարանների միջև արդեն իսկ կնքված պայմանագիրը:



Ներկաներին մանրամասն ներկայացվեց ծրագրի մտահղացման նախապատմությունը, դրույթները, իրականացման գործիքներն ու նպատակները: Ինչպես բազմիցս նշվել է՝ Erasmus+-ի HERITAGE ծրագրի շրջանակներում կնքված համագործակցության եռակողմ համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է, որ մագիստրատուրայի ուսանողներն առաջին ուսումնական տարում ուսումնասեւելու են ՃՀԱՀ-ում և ՀԴՏՀ-ում, իսկ երկրորդ ուսումնական տարում՝ Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանում և ստանալու են կրկնակի դիպլոմ:

Նախարար Մկրտչյանը նախաձեռնությունն անսախաղեպ համարեց այն առումով, որ դրանում ներգրավված են երկու հայաստանյան և մեկ արտասահմանյան բուհ: Նրա խոսքերով՝ այս ծրագիրն ապացույցն է այն բանի, որ Հայատանը շարունակում է մնալ կրթական առաջխաղացման դաշտում: Ողջունելով ծրագրի պատասխանատուներին՝ Լևոն Մկրտչյանը նկատեց, որ այն կստեղծի մասնագիտական նոր ուղղություններ, շրջանավարտներին կմոտեցնի աշխատաշուկային, և հորդորեց տվյալ մոտեցումը կիրառել նաև մարզային համալսարաններում:

Ողջույնի խոսքերով հանդես եկան երկկողմ համաձայնագիր կնքած համալսարանների ռեկտորները: Նրանք ծրագիրը պատվաբեր և պարտավորեցնող որակեցին՝ հույս հայտնելով, որ համատեղ ջանքերով այն կունենա հարթ ընթացք և բեղմնավոր ավարտ: